## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյան համայնք, Լ. Նավասարդյան 19/1, Հեռ. 095 702854 ,
shahumyan.armavir@mta.gov.am

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

N 111
*12 սեպտեմբեր 2019թ.*

Հարգելի՛ պարոն Մաթևոսյան.

Ձեզ է ներկայացվում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյան համայնքի ավագանու 2019 թվականի սեպտեմբերի 3-ի թիվ 12 արտահերթ նիստի որոշումները:

Առդիր՝ 9 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.Գ.ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

*Կատ. Առաջատար մասնագետ,գյուղատն.՝ Ա. Գրիգորյան*

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 01-17436-2019
04 10 2019թ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Շահումյան, 095 702854, shahumyan.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 սեպտեմբերի 2019թվականի N 70-Ա

### ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի վեցերորդ մասով, *համայնքի ավագանին որոշում է՝*

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյան համայնքի ավագանու 2019 թվականի սեպտեմբերի 3-ի թիվ 12 արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ՝ 6 – Կողմ 0 – Դեմ 0 – Ձեռնպահ

ԱԼՈՅԱՆ ՍՈՆԻԿ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՎԱՆՈՒՇ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ՍԱԴՈՅԱՆ ՔՅԱՐԱՄ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼՈՒՍԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.Գ.ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

Յավելված
Յայաստանի Յանրապետության
Արմավիրի մարզի Շահումյան
համայնքի ավագանու 2019 թվականի
սեպտեմբերի 3-ի թիվ 12 արտահերթ
նիստի N 70-Ա որոշման

# Օ Ր Ա Կ Ա Ր Գ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ

1. Ավագանու 2019 թվականի սեպտեմբերի 3-ի թիվ 12 արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:
   *Զեկուցող՝ համայնքի ղեկավար՝ Հ.Գ. Նավասարդյան*

2. Համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 05-ի N52-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:
   *Զեկուցող՝ համայնքի ղեկավար՝ Հ.Գ. Նավասարդյան*

3. Համայնքի ղեկավարին խրախուսելու մասին:
   *Զեկուցող՝ համայնքի ղեկավար՝ Հ.Գ. Նավասարդյան*

4. Գումար հատկացնելու մասին:
   (Համայնքում կոյուղագիծ կառուցելու համար)
   *Զեկուցող՝ համայնքի ղեկավար՝ Հ.Գ. Նավասարդյան*

5. Գումար հատկացնելու մասին:
   (Համայնքի փողոցներն ու ճանապարհները խճապատելու և հարթեցնելու համար)
   *Զեկուցող՝ համայնքի ղեկավար՝ Հ.Գ. Նավասարդյան*

6. Համայնքի ավագանու 2017թվականի մարտի 20-ի N20-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին;
   *Զեկուցող՝ համայնքի ղեկավար՝ Հ.Գ. Նավասարդյան*

7. Գումար հատկացնելու մասին:
   (Անկախության 28-րդ տարեդարձի կապակցությամբ)
   *Զեկուցող՝ համայնքի ղեկավար՝ Հ.Գ. Նավասարդյան*

Աշխատակազմի քարտուղարի ժ/պ՝ Ա.Զ. Գրիգորյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Շահումյան, 095 702854, shahumyan.armavir@mta.gov.am

### ՈՐՈՇՈՒՄ

03 սեպտեմբերի 2019թվականի N 71-Ն

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 05-Ի N52-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 5-ի <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյան համայնքի 2019 թվականի բյուջեն հաստատելու մասին>> N52-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

Վարչական բյուջեի եկամտային մաս՝

1/Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված համայնքի բյուջե մուտքագրելու ենթակա այլ եկամուտներ 7451 հոդվածին ավելացնել 1100000/ մեկ միլիոն մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամ.

2/Գույքահարկ փոխադրամիջոցների համար 7136 հոդվածին ավելացնել 570000/հինգ հարյուր յոթանասուն հազար/ ՀՀ դրամ:

Բյուջեի վարչական մասի ծախսային հատված՝

1/01 բաժին 1 խումբ 1 դասի <<Օրենսդիր և գործադիր մարմիններ>> ծրագրի 4269 <<Հատուկ նպատակային այլ նյութեր>> հոդվածին ավելացնել 110000/ մեկ հարյուր տասը հազար/ ՀՀ դրամ:

2/01 բաժին 3 խումբ 3 դասի ընդհանուր բնույթի այլ ծառայություններ ծրագրի 4241 <<Մասնագիտական ծառայություններ>> հոդվածից պակասեցնել 300000/ երեք հարյուր հազար/ ՀՀ դրամ:

3/01 բաժնի 6 խումբ 1 դասի <<Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ>> ծրագրով.

4239 <<Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ>> հոդվածին ավելացնել 460000/չորս հարյուր վաթսուն հազար/ ՀՀ դրամ:

4269 հատուկ նպատակային այլ նյութեր հոդվածին ավելացնել 900000/ինը հարյուր հազար/ ՀՀ դրամ:

4/ 10 բաժին 7 խումբ 1 դասի <<Սոցիալական պաշտպանություն>> ծրագրի 4729 <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածին ավելացնել 500000/ հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ:

Բյուջեի ֆոնդային մասի ծախսային հատված՝

1/ 05 բաժին 2 խումբ 1 դասի <<Կեղտաջրերի հեռացում >> ծրագրի 5112 <<Շենքերի և շինությունների կառուցում>> հոդվածից պակասեցնել 1180000/մեկ միլիոն մեկ հարյուր ութսուն հազար/ ՀՀ դրամ.

2/ 01 բաժին 1 խումբ 1 դասի /Օրենսդիր և գործադիր մարմիններ/ ծրագրի 5122 <<Վարչական սարքավորումներ>> հոդվածին ավելացնել 1180000/մեկ միլիոն մեկ հարյուր ութսուն հազար/ ՀՀ դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող տասներորդ օրը:

Ավագանու անդամներ՝ 6 – Կողմ 0 – Դեմ 0- Ձեռնպահ

ԱԼՈՅԱՆ ՍՈՆԻԿ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՎԱՆՈՒՇ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ՍԱԴՈՅԱՆ ՔՅԱՐԱՄ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼՈՒՍԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.Գ.ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Շահումյան, 095 702854, shahumyan.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 սեպտեմբերի 2019թվականի N 72-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԽՐԱԽՈՒՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետով, աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարելու համար, համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյան համայնքի ղեկավար Հարություն Գևորգի Նավասարդյանի նկատմամբ կիրառել խրախուսանք՝ միանվագ դրամական պարգևատրում՝ մեկ ամսվա աշխատավարձի չափով՝ 280000 /երկու հարյուր ութսուն հազար/ ՀՀ դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ՝ 6 - կողմ 0 - դեմ 0 - ձեռնպահ

ԱԼՈՅԱՆ ՍՈՆԻԿ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՎԱՆՈՒՇ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ՍԱԴՈՅԱՆ ՔՅԱՐԱՄ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼՈՒՍԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.Գ.ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Շահումյան, 095 702854, shahumyan.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 սեպտեմբերի 2019թվականի N 73-Ա

## ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի տասներորդ մասով, 18-րդ հոդվածի առաջին մասի 7-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյան համայնքում /սուբվենցիոն ծրագրի շրջանակներում/ նոր կոյուղագծի կառուցման աշխատանքներն իրականացնելու համար համայնքի բյուջեից հատկացնել 15876000 /տասնհինգ միլիոն ութ հարյուր յոթանասունվեց հազար/ ՀՀ դրամ:

2. Կոյուղագծի կառուցման տեխնիկական հսկողության ծառայության մատուցման համար համայնքի բյուջեից, որպես ծառայությունների վճար հատկացնել 479000 /չորս հարյուր յոթանասունինը հազար/ ՀՀ դրամ:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ 6- Կողմ 0-Դեմ 0-Ձեռնպահ

ԱԼՈՅԱՆ ՍՈՆԻԿ
ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ
ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՎԱՆՈՒՇ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՍՄԻԿ
ՍԱԴՈՅԱՆ ՔՅԱՐԱՄ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼՈՒՍԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.Գ.ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Շահումյան, 095 702854, shahumyan.armavir@mta.gov.am

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 սեպտեմբերի 2019թվականի N 74-Ա

### ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի տասներորդ մասով, 18-րդ հոդվածի առաջին մասի 7-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը համայնքի փողոցներն ու ճանապարհները խճապատելու և հարթեցնելու համար, *ավագանին որոշում է՝*

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյան համայնքի վարչական բյուջեից հատկացնել՝

1/ 900000/ինը հարյուր հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ՝ խճաքար ձեռք բերելու համար,

2/ 300000 /երեք հարյուր հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ՝ փողոցների հարթեցման և խճաքարի փռման աշխատանքներն իրականացնելու նպատակով որպես ծառայությունների մատուցման վճար:

2. Առաջարկել համայնքի ղեկավարին /Գ.Նավասարդյանին/՝ սահմանված կարգով իրականացնել սույն որոշումից բխող իրավական գործառույթները.

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ՝ 6 - Կողմ 0 - Դեմ 0 - Ձեռնպահ

ԱԼՈՅԱՆ ՍՈՆԻԿ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՎԱՆՈՒՇ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ՍԱԴՈՅԱՆ ՔՅԱՐԱՄ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼՈՒՍԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.Գ.ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Շահումյան, 095 702854, shahumyan.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 սեպտեմբերի 2019թվականի N 75-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 20-Ի N20-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյան համայնքի ավագանու 2017 թվականի մարտի 20-ի <<Համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի կազմում ընդգրկվող ավագանու անդամների քանակական և անհատական կազմերը հաստատելու մասին>> N20-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1/Որոշմամբ հաստատված հավելվածի 2-րդ կետում <<Սուսաննա Ժորժիկի Հարությունյան>> բառերը փոխարինել <<Քյարամ Ազիզի Սադոյան>> բառերով:

Ավագանու անդամներ՝ 6 – Կողմ 0 – Դեմ 0 – Ձեռնպահ

ԱԼՈՅԱՆ ՍՄԲԻԿ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՎԱՆՈՒՇ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ՍԱԴՈՅԱՆ ՔՅԱՐԱՄ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼՈՒՍԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.Գ.ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Շահումյան, 095 702854, shahumyan.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 սեպտեմբերի 2019թվականի N 76-Ա

### ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 7-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը , համայնքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Անկախության 28-րդ տարեդարձի կապակցությամբ միջոցառում կազմակերպելու նպատակով համայնքի բյուջեից հատկացնել 130000/մեկ հարյուր երեսուն հազար/ ՀՀ դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ 6- Կողմ 0- Դեմ 0- Ձեռնպահ

ԱԼՈՅԱՆ ՍՈՆԻԿ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՎԱՆՈՒՇ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ՍԱԴՈՅԱՆ ՔՅԱՐԱՄ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼՈՒՍԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.Գ.ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ